

չհասցընէր զիս. եւ ես որ խուլին ամէնէն մեծ դատախազն էի, ստիպուեցայ յոչ կամս միանալ անոր:» Եւ իրօք կը սկսին կեսարացւոյն անկումը պատրաստել. իրենց հետ կը միանայ նաեւ Մելքիսեդ կաթողիկոսին նուիրակը՝ Զաքարիա Վ. Վանեցի, որ Հռոմէն Պոլիս եկած էր այս միջոցին:

Զաքարիա Վ. 1612 Յունիս 15ին Հռոմէն Պոլիս հասաւ, որ արդէն յառաջագոյն ալ Մելքիսեդ կաթողիկոսին կողմանէ Ռումէլի եւ Կ. Պոլիս նուիրակ եկած, միւռոն բերած էր:

Երբ Զաքարիա Վ. Պոլիս հասաւ, եկեղեցականք եւ ժողովուրդն, որ կեսարացւոյ բռնութիւններէն եւ անիրաւ հարկապահանջութիւններէն ձանձրացած էին, իսկոյն իրեն դիմեցին: Զաքարիա Վ., Յովհ. Խուլին հետ քահանայից եւ ժողովուրդեան ժողով կազմեց Գր. Վ. Դարանաղցւոյ քով, եւ Գր. Վ. կեսարացին տապալելու որոշում տրուեցաւ: Յետոյ Ղալաթիա դարձեալ գումարուեցան յիշեալք, եւ ուխտ ըրին, որ միաբան անբաժան՝ կեսարացին պաշտօնանկ ընելու աշխատին:

Կեսարացին եղածը լսելով՝ Դարանաղցւոյն մարդ զրկեց, զասիկայ շահելու համար: Այն ատեն Զաքարիա ըսաւ Դարանաղցւոյն՝ որ ազատ է ուզածին պէս վարուելու, իրենք արդէն կարգադրած են գործը, արքունիքն ալ խօսած են եւ խոստացած՝ բոլոր արքունի հարկերը վճարել: Յովհ. Խուլ կատարելապէս Զաքարիայի կը հետեւէր, ինչպէս նաեւ ամէնքը. վասն զի Զաքարիա իբրեւ նուիրակ՝ մեծ հեղինակութիւն մըն